ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ԵՔ-ԳՀԾՁԲ-19/89» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամուլյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Սարգսյան,Ֆ. Կոստանդյան,Վ. Գևորգյան,Տ. Պողոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. Գնանշման հարցման առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

(Ն. Մամուլյան)

1.1 Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.

-օրը՝ 31.05.2019 թ.

-ժամը՝ 11:00

1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների տվյալների ճշտման մասին հարցում է կատարելվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի կողմից սահմանված ժամկետում տրամադրված եզրակացության համաձայն՝ Արավ ՍՊԸ-ի հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.2 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սույն գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Արավ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ 10000 /տաս հազար/ ՀՀ դրամի չափով: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը, 44-րդ կետը, որոշեց մերժել «Արավ» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդ տեղ զբաղեցրած Լիֆտէլեկտրոնիքս ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Լիֆտէլեկտրոնիքս ՍՊԸ-ին <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 31.05.2019 թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝		Ն. Մամուլյան
Անդամներ՝		Մ. Սարգսյան
		Ֆ. Կոստանդյան
		Վ. Գևորգյան
		Տ. Պողոսյան
Համակարգող՝		Վ. Մեժունց